


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
զրուած ինչպէս քէ ուղղել առ
ճեօրին. ԱՐՇԱՆՈՅՍ ըստրի
ԳԱՀԻՔԷ (Եգիպտոս)



ՔԱՆՔՇԱՐԹԻ ԳԱՆՈՒԿ

ԵՎԻՊՈՍԻ ՀԱՄԱՐ	
ճարտեսն ողջ դասին.	60
Վեցանկայ	35
ՕՏԱՅԻ ԵՐԿՐՈՐԷՐ	
ճարտեսն	20
Վեցանկայ	12

ՔԱՆՔՇԱՐԹԻ ԳԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
հոնքագրութեան վրայ է:

հոնքագրութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'են տուիր

ԱՋԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԿ
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN
Dirct.-propr. du Journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

—ՄԻՋԱՆԿԵԱՆ—

ԳՐԱՆԵՐ ՈՒ ԳԱՐԱՆՆԵՐ

(Շարունակութիւն նախորդ թիւին)

Ճերը ճշմարտութեան ձայնը վայրկեան
մը լուռ մնայ, դաւադիրներու խռովեալ
հոգիները կը հանդարտին՝ և դողդոջուն
սրտերը իրենց պաղարիւնութիւնը կը գրա-
նեն ու նորանոր չարիքներ կը հնարեն՝ կը-
սէ, խելացիին մէկը:

Այսպէս եղած էր Որբասիրացին Սեպտ.
2 ի նիստը, որուն մեր անցեալ թուով
ակնարկեցինք:

Ընտանեկան գումարում մ'էր սեպ-
տեմբեր 2 ին առաջագրուած ընդհանուր
ժողովը. նայաճակատը ձեռնարկէ մը յա-
ռաջացած սրտադող մը հոն հաւաքուող-
ներու մէկ մասին սիրտը գրաւած էր...

Ընդհ. ժողովոյ Դիւանի Ատենապետը,
որ Գահիրէի Հայոց և Առաջնորդարանին մեծ
զգազդուութիւնէն, անոր գրագիրը լինելու
երջանկութիւնը կը վայելէր, սոնքացած
իր այդ ժամանակաւոր փառքէն և շիա-
ցած զինք չըջապատող կարգ մը աննշան
և յեղյեղուկ մտքերու անասնային հնա-
զանգութիւնէն, ընկերութեան բոլոր ան-
դամներուն ալ հրաւեր ուղղած չէր և կամ
եթէ ուղղած ալ էր, մոռնալով թէ «հան-
րային խնդիրը անձնական գործերու հետ
չփոթելը ամենատար ցածութիւն է» հրա-
ւիրագրերը ուղղելու առթիւ, իրեն ստա-
րագրութիւնը խնայել ուղղած էր զրկելու
կարեւորագոյն ընկերոջ մը և իրեն տեղը
գտած էր ապուշին մէկը, որ Դիւանին մէջ
առանց ո' և է գործնական դեր ունենալու
կամ Դիւանի անդամը եղած ըլլալու, ա-
նոր տեղ ստորագրելու չափ անմտութիւն
ունեցած էր:

Հետեւեալ օրը ուղղամիտներու մտքին
մէջ ճշմարտութեան լոյսը կը շողար. և
շատերը զգացած էին իրենց Ատենապետ
կողմին վատթար չարամտութիւնը, ու 14
ընկերներու ստորագրութեամբ հաւաքագր-
ւով մը կը բողոքէին Պ. Ատենապետին հա-
կա-ուղղամտութեան դէմ՝ և զրկեալ ընկե-
րոջ իրաւունքը հաստատել կը պահանջէին:

Եւ որովհետեւ օրուան բուն խնդիրը
«Կանոնագրի Առաջնորդարանէն վաւերա-
ցումն» էր և հապճեպով մը որոշուած էր,
ուրիշ կարգ մը ուղղամիտ անդամներ ալ

Դիւանին հապճեպալից ընթացքին ներքին
միտքը կուհեւով, դարձեալ հաւաքագրով
մը Դիւանին երեսին կուտային իր փութ-
կոտութեան վստահներն և կը յիշեցնէին թէ՛
Ընդհ. ժողովոյ մէկ որոշման համաձայն,
որ բոլոր Եգիպտոսահայոց ընդհանուր հրաւեր
պիտի ուղղուէր, հարկ էր որ կանոնագրի
վաւերացման խնդիրը յետաձգուէր, մինչև
որ անդամակցողներու թիւը բազմանար և
նոր անդամակցողներուն ալ կամքը միասին
գտնուէր «վաւերացման խնդրոյն» մէջ:

Այս երկու գրութիւնները որ Պ. Ա-
տենապետին չ'սիրած բաներն էին և իրա-
ւամբ զինքը անել կացութեան մը մէջ կը
ձգէին, անոր միտքը վրդոված ու շեղ-
ցուցած էին ընկերութեան գլխուն տալիք
իր շեշտակի հարուածներն. հիմա միջոց
մը պէտք էր գտնել, իրաւունքի և ճշ-
մարտութեան առ ինքն ուղղած աչքը զօրեղ
հարուածին դէմ՝ իր անձը պաշտպանելու
համար:

«Վատին զէնքը կուտակը դարձնել և
փախչելն է». այդ ուղղութեան հետեւեցաւ
մեր Որբասիրացին չարամիտ Ատենապետին
ալ. հրաժարեցաւ...

Մէկ կողմանէ եթէ ճշմարտասիրու-
թեան և ուղղախոհութեան գրոջը ալաւ կը
ծածանէր նենդաւորներու գլխուն վրայ,
միւս կողմանէ սակայն ընկերութիւնը ՏԱ-
ՊԱԼԵՆՈՒ նպատակաւ անոր սրտին մէջ սը-
պրագած չարագործներն ալ իրենց պատ-
ճառները ստեղծած էին... ժամանակն է
տապալելու, կ'ըսէին մտովի:

Տկար փորձեր սակայն, որոնք շատ
ժամանակ առաջ եգիպտական տաք կլիմա-
յին ուժով միայն կը մարտակէին այդ դա-
սակարգին խանգարուած ու վատաւոզ
ստամբարին մէջ:

Այսոյսէ երիտասարդութիւնը զգաց ի-
րեն դէմ լարուած թակարգին նպատակը:
Անդին որքերը հաց և հագուստ կը խընդ-
րէին. սպասելու հարկ չկար. պէտք էր
մէկ հարուածով խորտակել թակարգը և
լախնախել անոր կոճակը բռնող դարանա-
կալ սեւադէմը...

Որբասիրացին Գործ. ժողովը, որ ե-
ւանդուն անդամներէ կը բաղկանար, զանց
ընելով դիւանի և դիւանական արգել-
ները, 1899 Դեկտ. 10 ի կիրակի օրը ան-
միջապէս ի ժողով կը հրաւիրէր ընկերու-
թեան բոլոր անդամները, լուրջ կերպով
խորհրդածելու համար իրաց խառնաշփոթ
կացութեան վրայ, և ընկերութեան զեկը
յանձնելու համար այնպիսի ձեռքերու, ո-
րոնք ո'չ թէ անոր քայքայման, այլ անոր

զարգացման և յառաջդիմութեան համար
կրնան մտածել:

Գործադիր ժողովոյ ամենաբարի նպա-
տակը անդամոց շատերուն կողմէ գնահա-
տելի եղաւ, և որոշեալ կիրակի օրը արդէն
պատկառելի Ընդհանուր ժողովը գումար-
ուած էր Ապու-Խալիլէ թաարսին մէջ:

Հրաժարիլ ուզող Ատենապետը, որ
կրցած էր մինչև երեք ամիս Գործերը ձգ-
ձգել և անորոշութեան մատնել, այս ան-
գամ ալ փոխը ունեցած էր իր ներկայա-
ցուցիչները և գործակիցները զրկել այս
ժողովին, որուն բուն նպատակն էր սակայն
ընկերութիւնը քայքայման վստահներէն
փրկել, անոր ուղին հարթել, ներկան
փայլեցնել և ապագան ապահովել:

Հոս կը թողունք այս անգամ ալ մեր
պատմական ծանօթութիւնները, որք կը
վերաբերին այժմու «Որբասիրաց» զար-
գացած և օգտաշատ ընկերութեան անցե-
լոյն, և առաջիկայով պիտի զբաղուինք անոր
ներկային դէմ գրուած թողչողոտներովը,
որոնք համընթաց են այս անգամ անոր
քայլերուն հետ...

(Շարունակելի) Ե.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՅՏԵՆ

ԹՐԱՆՍԻԱԼ

—X—

Կացութիւնը փոխուած չէ՛ կըբէք Հարա-
ւային Ափրիկէի մէջ:

Պօէր գոմանտօնի յարստեւ շարժուն վե-
ճակի մը մէջ են և կը շարունակեն միշտ փոք-
րիկ յաջողութիւններ ձեռք բերել. գրեթէ ամեն
օր մանր լուրեր կը տեղան, որոնք կ'իմացնեն
Պօէրական գունդերու մասնակի անկարեւոր հա-
մարում, բայց ըստ ինքեան շատ կարեւոր
յաջողութեան լուրեր:

Վերջին հեռագրիւնները կ'ըսեն թէ Տը Ուէթ
շարժումներ կ'ընէ վերստին Գաբ մասնելու հա-
մար, Տը Ուէթ այժմ Օրանի գետին մօտերը կը
գտնուի և նպատակն է գետը անցնիլ, արեւ-
մտեան կրիգուիլանտի Պօէր գոմանտօնի հետ մի-
անալու համար, որոնց պետն է Հէրցոկ գառա-
ւորը:

Լորտ Բիչնէր, ալ իրեն տեղակալներուն
անճարակութենէն յուսակաւոր, որոշած է վերջ-
նականապէս Տը Ուէթի դէմ եղած զինուորական
գործողութիւնները անձուք վարել. չենք գի-
տեր թէ նարթու մի քանի ամիս անց քաղաք
մը պիտի ունենայ այս անգամ, ամեն պարա-
զային մինք բացասական կերպով կը պատաս-
խանենք. որովհետեւ Տը Ուէթ քանի քանի ան-
գամներ ապացոյց տուաւ թէ Պօէր և աֆրիկ
միեւնոյն բանը չ'են և թէ անգին տարբերու-

Թիւն կայ Օսման Տիկմաթի մը եւ Պօէր գործարարի մը միջեւ :

Կազմէի տը Ծրան քֆօրթի Գարի թղթակիցը գործարար Տը Ուէթին Բլէրքստօրթի մէջ արտասանած մէկ ճառին համառօտութիւնը կը հրատարակէ :

Ահա այսպէս կ'ըսէ Տը Ուէթ .
« Պէտք է իր դրացին սիրել . բայց պէտք է ատել անդրիացին , եւ այս ոգևոր կը մեծցունեմ իմ զաւակներս , կ'ըսեն թէ՛ մէկ քանի լաւ անդրիացիներ կան աշխարհիս վրայ , բայց հարկաւ անոնք չատոնց մեռած են . որովհետեւ հատի մը անգամ հանդիպած է՛նք » :

« Վերջնական յաղթանակը մերը պիտի ըլլայ , թող անդրիացիները կըցածնուն չափ բողոք երկիրը աւերակ դարձնեն երկիրը դարձեալ պիտի ծաղկի . որովհետեւ նոյն իսկ այդ դրամատէրները պիտի գան զայն ծաղկեցնելու իրենց դրամներով : Դրամատէրները այսպէս պիտի սեղան հոս , ինչպէս իրողերը թայլուաները . Հարաւային Աֆրիկէի թայլուաներն ալ ոսկեհանքերն են » :

« Օր մը անդրիացի գործարարները զիս 36000 հոգեով հալածեցին . եւ միայն 2000 հոգի ունէի սակայն անդրիացիներուն քթէն բռնեցի . հաւատացէք որ միշտ ալ այսպէս պիտի ըլլայ որովհետեւ զիս երբէք կենդանի ձեռքերնին չ'պիտի անցնեն . իմ մահս երբէք կացութիւնը չ'պիտի փոխէ , քանզի յաջորդս արդէն նշանակած եմ » :

Զօրավար Տը Ուէթ այսպէս աւարտած է իր ճառը « Աֆրիքանտերներուն միջեւ ո՛ր եւ է չեզոքութիւն անկարելի է . Գարի բնակիչները կամ մեզի հետ պիտի ըլլան կամ անդրիացուց հետ » :

Եւ այս Տը Ուէթի Գար արշաւելու նպատակը հանդարտ քուն քաշել չ'տար Բիչնէրի , սպոր համար է որ անդրիացի սպարապետ վերջնական ըլլան մը պատրաստեց , այսինքն միեւնոյն ժամանակ 7 կողմէ 7 գործարանակ պիտի աշխատին Տը Ուէթը նեղը ձգել եւ զայն կտամ սպաննել եւ կամ գերի բռնել : Անդրիական թերթերը կը վախնան թէ միայն Տը Ուէթի անունը կրնայ ոտքի հանել Աֆրիքանտերները եւ այն օրը որ Պօէր հերոսը յաջողի Գար կոխել , ալ Գարի Հօլանտացիները մէկ երկուք չ'ընելով պիտի համախառնին արշաւողաց գրօշակներու տակ եւ ով գիտէ այն ժամանակ թէ ինչ կը գտնայ Հարաւային Աֆրիկէի արդէն խաբխուր կացութիւնը » :

Բրէթօրիակէն ՉԱ փետրվար թուականաւ կը հեռագրեն թէ Պօէրները Բլէր-Բիլբրի մօտ կամբըջակ մը օդը հաներ են եւ պաշար ու վաճառք բեռցած կառախուժք մ'ալ գրաւեր են , իրենց բոլոր կրցածը կողոպտելէ յետոյ հրոյ ճարակ ըրած են կառախուժքը եւ կծիկը դրած են :

Պօէրները Գալվիանի մէջ իրենց սուռն տեղին պէս սեղաւորուած են , քաղաքը ամսոյս 7 ին գրաւուեցաւ Բրէթօրիակի հրամանատարութեան տակ գտնուող լրեստող Ղոկատէ մը , հետեւեալ օրը իրարու հետեւ Պրանտի , Հէրցօկի Բրէթօրիակի եւ Վիլիէի ամբողջ զօմանտները հասան :

Ամսոյս 18 ին անոնք Վան-Րին-Տօրթ մասին եւ ամբողջ տեղական իշխանութիւնը գերի բռնեցին բայց պատուոյ խօսք առնելէ յետոյ ազատ արձակեցին : Պօէրները իրենց հետ Գարի մանրամասն քարտէսները ունին որոնք պատերազմէն ստաջ սպուած են Օրանտի պետութեան մէջ , Տը Ուէթի սուրճանդակները անդադրուած յարաբերութեան մէջ են այս զօմանտներուն հետ :

Ուրիշ ծանրակշիւ լուր մը կը հասնի Հար . Աֆրիկէէն . վերջերս ծովահէնի փոքրիկ նաւ մը քաղաքով երթալով քաղաք հանած է Պօէրներուն համար կամպըրթ ծովածոցին մէջ . անդրիական թերթերը այնչափ պայթակղած են այս լուրին վրայ որ ինչ գրելիքնին չեն գիտեր :

Ամսոյս 23 ին եկած հեռագիրը կ'ըսէ թէ՛ Տը Ուէթ Բրիտքստ կը քաշուի ուր Հէրցօկ հրամանատարը իրեն 1000 նոր ձիեր պիտի հասցունէ եւ յետոյ Գար պիտի արշաւէ :

Հայտելպէրիկի մօտ 500 Պօէր թղթատար կառախուժք մը բռնած են , մէկ կամաւոր մը սպաննուած եւ 5 ճամբորդ փրարորուած կան :

Իրեւ . այրած սրտի միտիւթարանք Հորոս Գիչնէր վերջին հեռագրաւ մը կ'իմացընէ թէ՛ սպարապետ Պօթա տեսակցութիւն մը առաջարկեր է իրեն որուն միջոցին հաշտութեան վրայ պիտի բանակցի եղիւր :

Ահանջ կ'ախենք այդ հեռագրին . canard մը չէ՞ արդեօք սա ալ . . . :

ԼԵՒՈՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՋԱՆԱՅԻ ՄԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻԻ

Անդրիական առած մը կ'ըսէ թէ « լուրը ոսկի է » : Սոյն առածին ճշմարտութեան վրայ կ'իջե երբէք տարակուսողներ կան , թող անգամ մը Նոր Օրի 65րդ թուոյն մէջ « Մանկավարժական Դասեր » վերնագրով յօդուածը կարդան . այն ամեն կատարելագոյն պիտի համոզուին այս ճշմարտութեան :

Ինչ արտառոց դաղվաբներ , ինչ անհեթեթ արամաբանութիւն . հակասութիւններով եւ գոնիկ բացատրութիւններով լի այդ անհամու անլի գրուածքէն ինչ որ կըցիւրք հասկնալ , սա է թէ՛ համալսարանական մտնկավարժը — եթէ երբէք ներելի է մանկավարժի անունը տալ յօդուածագրին — զմարդիկ երեք դասակարգի կը բաժնէ՛ իրենց ստացած կրթութեան տեսակետով : Միայն մասուր զարգացում ունեցողները մարդապաշտ կ'անուանէ , իսկ մարմնով եւեթ գարգացածները մարդ-անասուն . եւ մարդապաշտէն նախամեծար կը համարէ մարդ անասունը՝ սա համոզմամբ անշուշտ թէ այս վերջինը ընդհանուր զարգացում կառնը քաշելու աւելի յարմարութիւն ունի : Իսկ երկրորդ տեսակը , բարոյապէս զարգացողները , կը նմանցնէ դաստակներու , որոնք եթէ օգուտ չունենան վաստակար ալ չեն պատշաճ ընտրապայտեղուէ պէս :

Հապա այս երեք տեսակ դասարարութէն զուրկ եղողները , պիտի հարցնէ անշուշտ ընթերցողը : Տէր պապան կամ փափկակնկալութեամբ եւ կամ մոռացմամբ անոնց անունը չէ տուած : Սակայն սոյն դասաւորման բնական հետեւութեամբն զերբին է հասկնալ թէ անոնք ալ հրէշ-մարդ կամ կով-մարդ են : Զարմանալի չէ՛ հողագործ բարոյագէտի մը մանկավարժական դասերը ասկից տարբեր բաներ չէին կրնար ըլլար . ազարակին մէջ ինչ կրնայ գտնուիլ . կատք , կով , ձի , ոչխար , խոզ , եւ ասոնց թըշնամին՝ գայլ :

Կրթութեան եւ բարոյակաւորութեան վրայ ճառելու ելլող կրօնաւորի մը դրչին առի ինչ ախորժաւուր եւ փափկահնչիւն են արդարեւ սա տեսակ բարեր . մարդապաշտ , մարդ անասուն . պատաստող դազաններ , հրէշ , որոնք կուղղուին մարդ էակին . . . : Արդեօք Տէր պապան չէ՛ր կարող նուազ վերաւորիչ եւ պատանջ բառերով բացատրել իր եզակիան (?) դաղափարները :

Համալսարանական բարոյախօսք՝ որ կ'երէ ասոր անոր կրթութեան դասեր տալ , ցոյց կուտայ գործով թէ՛ ինքն որբան կը կարօտի բարոյական զարգացման եւ քաղաքավարութեան որ դրչի մէկ հարուստով սանակոխ կընէ պատշաճութեան ու փափկանկատութեան ամեն օրէնք :

Ինչպէս ըսի , յօդուածագիրը իրապէս ազարակի մարդ՝ կենդանի օրինակները կ'առնէ անկէ : Ուստի կ'ըսէ , « երբ մի իսկական կառքի կը լծենք երկու բողոքովին տարբեր ուժերով ունակութիւններով ձիեր , կտուրը շատ զժուարտութեամբ առաջ կ'երթայ . որովհետեւ մէկ ձիի զանդաղ լինելը միւսի աշխուժութիւնը կը ջլատէ , կը կտորէ : Ուստի կատավարը պէտք է զանդաղ , ծոյլ ձիի արձակէ կառքէն եւ նրա տեղ լծէ կառնորոտ , աշխատասէր եւ յանաջարիւ ձի մը . ապա թէ ոչ կատավարը Աղէքսանդրիայէ Գահիրէ չէ կարող հասնիլ » : Սակայն մենք ալ կը հարցնենք . հապա կատավարը

խակ եւ անհմուտ մէկը ըլլայ , օրինակի համար աւելի քարաքիւս եւ դրուժ մշակելու քան թէ՛ կատավարելու յարմար , այն ստեն ինչ ընելու է . . . :

Աւսակախօս բարոյագէտը այսպէս կառքին ձիերը փոխելով , եւ խել մը տաղտկալի կրկնութիւններով սա կըրովագրութեան կը յանգի թէ՛ գաստիարակութեան գործիչները եւ ծնողքները իրարու համապատասխան ըլլալու եւ զուգընթացաբար աշխատելու են :

Ապա կ'անցնի մարդկային զարգացման ինդրոյն եւ զայն երեք դասի կը բաժնէ : Յօդուածին սոյն մասն աւելի հետաքրքրական է . նախ խօսելով բարոյական զարգացման վրայ կ'ըսէ , « միայն բարոյական զարգացում ունեցողը տղի կը լինի , ի բայց սոնկելով բարոյագրիտութիւնը՝ բոլոր միւս գիտարիւններին մեջ եւ զարկ մտնակալ կորուստից , ոչ յի » : Յետոյ անցնելով միայն մասուրապէս զարգացածներուն , կ'ըսէ , « այսպիսի անձնաւորութիւնը բարի մտքեր բարի խօսքեր եւ բարի գործեր , արտադրելու եւ ընկելու կարողութեան զուրկ լինելով իւր ունեցած գիտարիւններին անազին պաշարը գործ կը դնէ ըստ իւր փանսանջներին » : Սակայն տէր հայրը չ'բացատրեր թէ՛ գիտունին այդ փանսանջները ինչ բանի մէջ կը կայանան , եւ կը յարէ « իսկ եթէ յիշեալ անհատը ոչ մի զգալի օգուտ չի կարող տալ հասարակութեան իւր անլարգացա շատ հիւանդութիւններին կ'ընթացուի մարմնով , գորտ համար կ'ուսկուտ չ'կրնայ » : Այս անհեթեթ գաղափարին համեմատ ուրեմն ո՛ր եւ է քաջատղջ երկաթագործ մը , բեռնակիր մը աւելի օգտակար է հանրութեան , քան թէ՛ հալ ու մաշ եղող մարմնով հիւանդատ Պէշիկթաշլեան մը , Դուրեան մը եւ ասոնց պէս հարգարարներ . . . :

Յօդուածագիրը որ իւր թեօթին կը հաստատէ ո՛չ թէ՛ համալսարանի , այլ համալսարանի գրութեան վրայ հաստատել կ'ուզէ սա սկզբունքը թէ՛ օրինակի համար , հաւաք իրաջօն աւելի օգտակար է հասարակութեան քան թէ՛ իր գործիչներն մը իւր հիւանդակի մարմնով : Արդեօք ինչն պիտի ըսէր մարմնով ակար բայց սրտով ու մարմով արի անմահ Պարսնուսը , եթէ կարելի ըլլար իրեն պահ մը գերեզմանիցն դուրս ելնել : Ինչ առատ նիւթ պիտի մտասկարարէր իրեն այդ խեղճ ու կրակ յօդուածը :

Մենք քանի՛ քանի գիտուններ եւ գրագէտներ կրնանք մտասնել ընել՝ որոնց մարմնական վատտողութիւնը արդեօք մը չէ՛ եղած որ միմիայն իրենց գիտութեան անդրին պաշարով անթուելի օգտակար ծառայութիւններ մատուցանեն մարդկային ազգին : Մինչդեռ անդին հաստ ծո՞րակով , գիրով փորով բարոյախօսներ պարզապէս մահաբոյժներ կ'ղած են :

Յետոյ ձիի զարգացումը մը կ'ընէ բարոյախօս տէր պապան , երբ ստիկ մտաւորական զարգացում ունեցողներն՝ զայց կուտայ իրը չափաւոր եւ համուր : Մինչդեռ յաճախ տեսնուած է որ անոնք անշահախնդիր , մարդկութեան օգտին համար ինքզինքնին գոնող անհատակները եղած են : Համալսարանական յօդուածագիրը իւր խօսքը կը վերջացնէ այդ դասի անձերը (միայն մասուրապէս զարգացողները) ամենալաւատակար ու վտանգաւոր մարդապայլեր անուանելով : Չը մոռնանք ըսել թէ՛ ըստ համալսարանական մանկավարժ բարոյախօսին՝ միայն մարմնով զարգացածներն ալ « մարդ-անասուններ » են , որոնք առաջիններուն պէս սակայն վաստակար չ'են :

Արդ թէ որ մենք ալ խորհելու , դատելու եւ արամարանելու իւր այդ եղանակին հետեւինք , պիտի ըսենք թէ՛ ինք ալ — իւր ատողը եւ ուժեղ մարմնէն դատելով — ապահովապէս երկրորդ դասին կը պատկանի , եւ որովհետեւ միեւնոյն ատեն՝ մտքով զարգացած ըլլալու կատարելալ համոզումն ունի տէր հայրը , ուրեմն ինքն ալ մարդապայլ-մարդանասուն է : Հապա բարոյապէս զարգացումը պիտի հարցնեն թեւեւ ընթերցողք . սակայն այդ մասին որոշ գաղափար մը չ'ունենք դեռ , իւր բարոյական նկարագրին վրայ ստաջ տեղեկութիւն առնելու համար պէտք է դիմել զինքը մօտէն ճանչցող իւր գեղի ժողովրդեան որ , ինչպէս կարգացինք , բողոքներ ուղղած են առ որ անկ է

արանջալով յիշեալ քահանայի ընթացքին դէմ որ Երուսաղէմ ուխտի երթալու պատրուակու մեկնած է անկէ եւ ամիսներէ ի վեր անհովիւ լքած է ժողովուրդը տօնական օրերու մէջ իսկ կրօնական պաշտամունքէ, հոգեւոր միութեամբ թեկն զուրկ թողլով զայն: Եւ մինչդեռ ասորին ընտրագրայի քարոզներ կը կարգույն, անդին գուցէ մարդագոյնը իւր հօտը կը կեղեքեն ու կը փարատեն:

Արդեօք ինչ գաղտնիք ունի այդ բարոյախօս քահանայն երկնաւոր վարդապետին սա զեւրագանցապէս բարոյալից խօսքին վրայ թէ՛ « հովիւ քաջ, հովիւ բարի գնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց... » (1)

Մեր այս քանի մը տողերով կ'ըզենք միայն զգացնել թէ մարդս շատ անգամ աւելի կը շահի լուսութիւն պահելով, քան թէ ինքզինքը ցուցնելու անհջով անհմուտ եղած նիւթերուն վրայ ճառելու ելնելով:

ԱՐՄԷՆ

(1) Կը յիշեմ թէ յիշեալ քահանայի մասին Վիհ. Հայրապետին կողմանէ եւս զիտողագիր զրկուած է Ազգ. Առաջնորդարան եւ բացարձակ զանախօսութեամբ է պարտաճանաչութեան եւ կրօնական կարգապահութեան դէմ գործած զանցապահութեան համար:

ՏՕՔԹ ՔՕՐՆՔԷԼՏ

Վ.Ա.ՅԵԱԼ, Վ.Է.ՆԱՍԻ ՀԱՍԱԼԱՐԱՆԷՆ

Նախկին ներքին Բժիշկ Վիհենայի գըլխաւոր հիւանդանոցներուն: Մասնագէտ միկանցքային հիւանդութեանց, Գաղղիական ախտի, կոկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց:

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 և 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 և 5, իր տունը Եէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔԱՆԻՒՄ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարսից Վեհ. Շահին Եւրոպայէ վերադարձած ժամանակ թաւրիզ հանդիպելը, և տեղւոյն Հայաստան ընկերութեան ուժ տալու նկատմամբ ցոյց տուած բարի տրամադրութիւնը, ինչպէս նաև դէպի իր բուրջ Հայ հպատակները և անոնց կրթական հաստատութիւնները յայտնած համակրանքը և անոնց յառաջդիմութեան նպաստելու համար տուած խոստումները արձանագրած էինք այս էջերուն մէջ, թաւրիզէն մեր ստացած մէկ նամակին համաձայն:

Վերջին « Նոր Կեանք »-ին մէջ կը գրուենք Վեհափառ Շահին Հայ կրթական նախնոր հաստատութեանց բացման համար տուած հրովարտակին մէկ օրինակը, որ հետևեալն է:

ՇԱՀԻՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Այն օրէն որ Քիւնի փառայն թագաւորներու Քահր եւ Իրանի կայսրութեան Շահնշահութիւնը մեր Օղոստոփառ անձնաւորութեան վիճակուեցաւ, մենք իբրև երախտագիրութիւն առ Աստուածային Նախախնամութիւնը, մեզի շնորհած ողորմութեան ճառագայթները տարածեցինք մեր կայսրութեան բոլոր բնակիչներուն վրայ, ինչ ազգի, ցեղի ու կրօնքի ալ որ պատկանէին անոնք. եւ ամէնքը Հայրենիքի գաւազանը համարելով ամէն առիթի եւ ամէն պարագայի մէջ բան մը չ'խնայեցինք անոնց բարօրութեանը համար: Յոյս ունինք որ ամենակարող Աստուծոյ օգնութեամբ հիմակուրէն ա-

ւելի վայելելով երկնային օժանդակութեան շնորհք, մեր այս սուրբ պարտականութեան մէջ աւելի յաջողութիւն գտնենք:

Եւ արդ, բան մը որ մեր սրտին բարի իղձերուն կատարելապէս կը համապատասխանէ, այն է թէ մեր կայսրութեան հայ ազգաբնակչութիւնը որ հին ժամանակներէ ի վեր բնակած է առ ոտս Պարսից արքայական գահուն, եւ որ միշտ հաւատարիմ հպատակութեան եւ հայրենասիրութեան ապացոյցներ է տուած, այժմ մտածել է իր զարոցներուն թիւը աւելցնել, ու թէ՛ Թէհրան, թէ՛ Գաւրէթ, եւ Պարսկաստանի ուրիշ գաւառներ հաստատել մէկ քանի կեդրոնական նշանաւոր զարոցներ, ու այս առթիւ մեր Օղոստոփառ Վեհափառութիւնէն արտօնութիւն է խնդրած այդ զարոցներու բացմանը համար: Հայերուն այդ նպատակը մեր սրտագին փափաղներուն համաձայն գտնելով, եւ նկատելով որ այդ նպատակը մեր հպատակներուն յառաջդիմութեան պատճառ պիտի դառնայ կըրթութեան, արեւաններու եւ կրկնազարծութեան ասպարէզներու մէջ, եւ մղիչ պիտի հանդիսանայ վաճառակաւութեան զարգացումին, սոյն արքայական հզօր ֆէրմանով անոնց արտօնութիւն կը շնորհուի Պարսկաստանի Հայ զարոցներու բացման համար, եւ այդ զարոցները մեր մասնաւոր հոգածութեան ու պաշտպանութեան տակ անկելով կը հրամայենք որ այդ ձեռնարկութեան համար յատկացուած գումարները գործածուին սոյն գործին ձեռնարկողներու եւ հոգաբարձուներու պտորաստելիք կանոնադրին համեմատ որոշուած ծախսերու: Բոլոր հաստատուած զարոցները ընդհանուր կերպով մեր արքայական անձնաւորութեան պաշտպանութեան տակ գնելով, կը հրամայենք որ մեր բոլոր պաշտօնականները ամէն տեսակ աջակցութիւն եւ օգնութիւն նուիրեն սուրբ գործի յաջողութեան համար:

Տրուած Բէճէպ ամիսը 1318 թիւին

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիչ 23 փետրվար. — Հալար Պէրպէրներ Ալէքսիոյ հարաւակողմը Թէմիւնուի վրայ յարձակած են. ֆրանսացոյ կօրուստը 30 հոգի է սրոց 3ը սպայ են:

Սանֆրանչիսքօ 23 փետրուար. — Սիթի 0թ-րիօ-տը Եանէյրօի նաւարկութեանը 122 հոգի խեղդուած են:

Թիէն-Չին 23 փետրուար. — Քանի մը հարիւր Չինացի կանոնաւորներ 50 դերմանացիի վրայ յարձակեցան ամառս 21 ին Բաթիմիկֆուի արեւմուտքը: Տաք կախէ մը յետոյ Չինացիք ետ մղուեցան, դերմանացոյ կորուստը 8 հոգի է իսկ Չինացոցը՝ մօտաւորապէս 200:

Բարիչ 24 փետրուար. — Թէմիւնուի ֆրանսացոյ կորուստը 9 սպաննուած և 21 վիրաւորուած են իսկ Պէրպէրները 100 ըսպաննուած և 200 վիրաւորեալ ունին:

Սէլանիկ 24 փետրվար. — Պուլկար Բորաքանտիսթները Իվան Քօնիթօֆ Բրօֆէսէօսին հրամանատարութեան տակ փորձեցին Տիւ-Չարչի « Էվանիէլիզա » եկեղեցին գրաւել, բայց Յոյն բնակիչներէն ետ մղուեցան բաւական թուով վիրաւորեալներ ձգելով:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ ՎՆԱՍԸ. — Անցեալ օր ծանօթացուցինք մեր ընթերցողաց թէ Եէյիս Էթմանի կալուածին նոր վարձակալը առաջնորդարանի դէմ վճիռ ստացած է 900 ոսկւոյ չափ սուգանքի մը:

Կը կարծենք թէ Ն. Վ. Տիգրան բաշա երբ տեղեկանայ և մանրակրկիտ քննու-

թիւն մը հրամայէ, այս վնասին պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ առաջնորդարանի պարզ Նաղարէթին վրայ, որ նախորդ վաճառիւնէն յետոյ մը կորցնելով, խնդիրը Քաղաք. ժողովոյ առաջարկութեան վրիպեցուցած է:

Այս գործին մէջ տէր Մամբրէ ալ մասնունենալու է. տեսնենք...:

Մեծ ՌԻՐԱԽՈՒԹԵԱՄԵՐ կը լսենք թէ մաթէմատիքի մեծանուն Բաօֆէսէօս Յալուր էֆ. Պայտեհան — նախկին սուսցիչ Ազգ. Կեդրոնական վարժարանի — հանրօգուտ շինութեանց ծրագիրներու շրջանակին մէջ կարեւոր պաշտօնի մը կոչուած է: Մեր անկեղծ շնորհատուութիւնները:

ՄՈՌՅՈՒԱԿ ՀՕՐՄՏՈՒԹԻՒՆ ՄԲ. — Շատ մը անգղիներէն, Կերմաներէն և Յունարէն թերթեր հետաքրքրաշարժ մանրամասնութիւններ կուտան Ազգ. քանդակարտի մէջ քաշածանօթ Տօքթ. Յիքալասի անսպասելի կերպով ինկած ահագին ժառանգութեանը համար:

Թանխրօմուս սպէս կ'ըսէ:

« 60 տարի առաջ Էմինուէլ Մանուրբազօղլու Ֆիլիպեցի արհեստաւոր մը, իր ունեցածը չ'ունեցածը ծախելով 4000 ֆր. ի գուճարով մը Հնդկաստան գնացած է բազմ օրներու: »

Էմինուէլ Մանուրբազօղլու շատ մը մեծ ձեռնարկներու մէջ մասնակէ յետոյ, անբաւ հարստութեան մը տիրացած է. բայց անբաւ ժելի հիւանդութեան մը լուսուելով, բազմ գը՝ որ միշտ իրեն ժպտած էր, թոյլ չէ տուած իր 2 միլիոն անգղիական ոսկիները վայելելու:

Ձգալով իր մօտալուտ մահը իր կառու կը ըրած և զայն կալկաթայի Հնդկական դրամատուներ ձգած է, պայմանաւ որ 50 տարի յետոյ իր գրամի և անոր տակոսները յանձնուին իր ժառանգ սրբներուն: Այդ 50 տարին անցնելով, դրամատուներ իր յաճախորդին կտակը լացած և փնտաւաքները ընելով գտած է երջանիկ ժառանգ սրբը որ Ազգ. քանդակարտի Տօքթ. Յիքալասն է:

Բոլոր տակոսներով տեքզլ գումարը այժմ 50 միլիոն անգղիական ոսկիի կը հասնի:

Ինչ բողոքաւոր մարդ է եղեր այդ Տօքթէօզը որ չ'սպասած տեղը 50 միլիոն անգղիական ոսկիի ոհաւոր գումարը կուգայ իր գուճար կը զարնէ և կ'իմացնէ իրեն թէ՛ նիւթական սեռակէտով ինք աշխարհի ամենէն բազմաւորը ըլլալուն վրայ թող չը կատարի կրքէր:

Ա. Չ. Գ

« Արշալէյս »-ի գրաշարը Պ. Յովսէփ, երկու օրէ իվեր անհետացած է և ուր գրանուելը գիտնալ անկարելի եղաւ մեզ: Կը խնդրուի մեր Պատ. քննիչներէն և ազգայիններէն, որ եթէ տեսած են և գիտեն անոր տեղը, կամ որ գտնուելը, բարեհաճին իմացնել մեզ:

ՆԱՍԱԿ ՓԱՐԻՉԷՆ

Բարիչ 18 փետրվար 1901

ԿՈՅՐԵՐԸ ԿԸ ՏԵՅՆԵՆ, ԽՈՒԼԵՐԸ ԿԸ ԼԸՍԵՆ!!!. — Այս միջոցին Բարիչի հոգեբանական Ենսիքիտն (Institut Psychologique) ամենուն հետաքրքրութեան առարկան

է դարձեր, վասնզի այնտեղ կոյրերուն տեսնել կուտան և խուլերուն լսել: Արդէն երեք հարիւր փորձեր եղեր են խուլերու և կոյրերու վրայ, որոց ամենքը ի մեծ զարմանս ամենուն լսած և տեսած են: Գարձեալ ելեկտրականութիւնն է որ այդ հրաշալիքները կը գործէ: Այս անգամ սինեմատոգրաֆն (cinematographe) է որ գիւրութիւններ կուտայ, կոյրերը այդ գործիքին մի մասին վրայ ձեռքերնին պտտցնելով, պարզապէս կը տեսնեն եղեր, իսկ ելեկտրականութիւնով — զորս գործիքին վրայ կ'աւելցնեն — խուլերն ալ կը լսեն խիստ պարզ և յստակ: Երանի թէ կատարելագործուէր այս նոր գիւտը, ինչ ծառայութիւններ պիտի մատուցանէր հեծող մարդկութեան:

ԼՈՐՏ ՌՕՊԵՐՏՍԻ ՇԲԱՆՆԱՆԸ. — Այսօրուան թուով Պէտլինէն մեզ կը գրեն. Գերմանիոյ կայսրը Լոնտոնէն մեկնելէն առաջ Սէ Առիւծի նշանը տուաւ անգլիացի Ռոպերթս զօրավարին, այս գործը այստեղ և ամբողջ Գերմանիոյ մէջ աւելի բաժանանայ տեղի տուաւ քան Քրիւկէրի ընդունելութիւն չ'գտնելը: Ասով Գերմանիոյ կայսրը կը բռնաբարէ այն խօստումը զոր նա ըրած էր Անկլո-Պօլսական պատերազմին մէջ չեզոք գիրք մը պահել: Կիցօմ որ վերին աստիճանի վշտացուցեր էր գերման ժողովուրդը՝ Քրիւկէրը չ'ընդունելով, աւելի ևս վշտացուց իւր ժողովուրդը շքանշան մը տալով անգլիացի զօրավարի մը որուն միակ փառքն է եղած ափ մը գիւղացիներու դէմ կռիւններ մղել:

Ասկէ զատ քաղաքական շրջաններու մէջ կը հարցնեն թէ գերմանական կառավարութիւնը ինչ բան յանձն առեր է անգլիական կառավարութեան հանդէպ, որ պէսզի կայսրը ստիպուած լինի այդպիսի ստորնացնող միջոցներու դիմել:

Մէկ խօսքով Լորտ Ռոպերթսի շքանշանը աւելի մեծ հարուած մը տուաւ Կիցօմ կայսր ժողովրդականութեան, այնպէս որ կայսրը իւր անցեալ վարկը կրկին ձեռք բերելու համար շատ դժուարութեանց պիտի հանդիպի:

Մ. Ս. ԴԱԻԻԹ ԲԵԿ

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 24 ՓԵՏՐՈՒԱՐ 1901
Table with 6 columns of numbers: 2311 6366 361 8460 263 433, 522 1133 1511 2000 2242 2259, 2298 2779 2784 3023 3030 3394, 3532 5995 6292 6477 6500 6801, 6974 7580 7688 7988 8683 8887

ՆԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ 24 ՓԵՏՐՈՒԱՐ 1901
Table with 6 columns of numbers: 9967 5234 9278 9384 7146 3755, 1272 8393 5997 7981 1837 1473, 6950 6813 8129 5983 7735 2180, 6602 5069 8729 4305 2749 8329, 5974 9595 5284

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալատի փողոց. Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Սթրէշի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂՆԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներքին եւ արտասահման միջնա ցարք 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վկայականներով եւ մեքայններով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ:


ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսի մէջ ստացած է:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՊՅԵ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յատկանշին:



Ձրի դասեր և նորագոյն թիւներ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւն ին մեքենայից եւ նորագոյն ամեն կարգի մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ
ՏԻԿԻՆ ՍՈՓԻԿ ԱՉԳԱՎԵՏԵԱՆ
Շարա-Ապսխը-Ագիլ

Վերջերս իւր բնականութեանը Խուրուհիքէն փոխադրած է Շարա Ապսխը Ագիլ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Անմէտ պէյ Ապսխը Բազդիի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արգէն ծանօթ ըլլալով գահէրէրնակ ազգայնաց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում:

ՄԻՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՎՄԻ ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացույցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է, նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացույցներ 120 ՂՐԵ է սկսեալ մինչև 2500 ՂՐԵ: Դրչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և քրք սիտէ ժամացույցներ. պատի և քօնսլի բողմազան Բանտի լներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան ֆոնտիկրաֆներու:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՐԸ
Օտեսնիյե դեղատանին դիմացի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երջարտարականներ, Գիւլներ, Հրախրագրեր, Մանազրներ, Տեղեխագիրներ, Կանոնագիրներ, Տուներ և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերն:

- 1. ԲՆԱՇԻՍԱՂԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արգէն խօսուած է «Արշալոյսի» մէջ:
2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արգելուած է եղեր:
3. ՀԱՒԱՔԱՄՈՅ Հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լեոն Եղիազարեանցի:
4. ԶՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոսներ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀՊ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՄՏԵ ԵՒ ԿԱՐԵՐՈՐԸ
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՎ գլխաւոր գործակատար յԱզեքսանդրիա